



ՄՐՄՈՒՆՉՆԵՐ

ՌԻ

ՏՐՏՈՒՆՉՆԵՐ

— Արէք բալորը, ինչ որ կամենում
էք, բայց ամենից առաջ եղեք նրանց
պէս, որոնք կարողանում են կամենալ:

— Սիրեցէք ձեր մտերիմներին ինչ-
պէս ձեր անձը, սակայն ամենից առաջ
եղեք Գրանց պէս, որոնք սիրում
են իրենց անձը:

ՆԻՀԵԼ

Ա. ՅՈՎՐԱՆՆԻՍԵԱՆ

891. 99
Հ - 85

Լազարօսական

Տպարան Մայր Արքուոյ Ս. կջմիածնի

1909

91.99

2152 19 NOV 2011

Հ-85 մը.



ՄՐՄՈՒՆՁՆԵՐ

ՈՒ

ՏՐՏՈՒՆՁՆԵՐ

— Սըէք բոլորը, ինչ որ կամենում
էք, բայց ամենից առաջ եղէք երանց
պէս, ուռնի կարողանում են կամենալ:

— Սիրեցէք ձեր մտերիմներին ինչ-
պէս ձեր անձը, սոկայն տմենից առաջ
եղէք երանց պէս, ուռնի սիրում
են իրենց սենք:

Նիշէլ

Ա. ՅՈՎԱՆՆԻ ԽՈՏԵԱՆ



Փադարքապատ

Տպարան Մայր Արքույ Ս. Էջմիածնի

1909

13 JUN 2013
LOS VON 81

39705

ԱՀԿԻ ԸՆԿՆՈՂ ԿԻՆԱԼՆԵՐԸ.

- S ողովակներ Ահալ է Պետք է մենի
- 3 վամփերներ վամփիրներ
8 - կուտ շիտայ կուր շիտայ
3 և 4 - բոցկըստայ,տայ; բոցկըստան,տան:
- 2 չա,թէ ինչ չա,դէ ի՞նչ
- 7 Միայն...թէ Միայն...ոթէ
6 - վառ սրտի ճառ սրտի
10 - սերըս վառել սերս զառել
1 - ինչ բարձրէ ինչ որ բարձրէ
- 2 կեաքս կեանքս

2791

Հայուսակարգ Բ
Հայուսակարգ Ա բառը Ա առաջ Ա առաջ
0001

* * *

Մամնջանի.
Տրենջանի,
Բայց անլաց,
Անձառաց,
Անփականի,
Անկապայնի
Մենի դիմենի
Միւս առաջ:

Անցրու,
Անփարու
Մենի նետմենի
Ծովի մէջ.
Զէ՞ սրու
Աև փարու
Այդ մենի ենի
Կեսնի մէջ:

— 83 —

ԱՇՈՒՂԻՆ

Լացող աշուղ, բաւական չէ
Մեր սըրտերին սուգ մաղես,
Բաւական չէ ուրախ երգը
Հեծկլտանքով շաղախես:

Գարուն եկել, վարդը բացւել,
Հըրէն բըլբուխն էլ կը գայ,
Էլ ի՞նչ ես զու սազդ առել,
Ճամբէն կապում, որ չգայ:

Դու ուզում ես ցուրտ ձմեռը
Զիւնով պատէ ամեն տեղ,
Եւ արնագունչ էն գէլերը
Արիւն գըցնն շէն ու գեղ...

Դու ուզում ես համար սառուցը
Ըսդմիշտ պատէ ջըրերին,
Եւ աղբիւրի քըլքըցը
Էլ ջնկը ըը տայ մեր սըրտին...

Դու ուզում ես վարդ ու ծաղիկ
Ցըրտից ընկնեն դալկահար,
Եւ բըլբուլը սէրը սըրտում
Վըշտնվ մեռնի ցաւագար...

Բայց չէ, այնուղ գներ ես լավիս,
Գարունն անուշ .միշտ կը գայ.
Սէդ բըլբուխն էլ վարդը թողած
Քեզ հետ երեք վիշտ չի լայ...

Նա լաւ գիտէ —լացաղբիւրը
Մարաւ արտին ջուր չի տայ.
Նա լաւ գիտէ —լացի դուռը
Քաղցածներին կուտ չի տայ...
Նա քեզ կասէ. «Լացի դուռը
Անջուր արտին ջուր չի տայ»...
Նա քեզ կասէ. —«Լացի դուռը
Անսուր մարդին թուր չի տայ...»

ԿՐԹՈՄՈՒ ՈԳԵՆԵՐԻՆ
Անձրու ու անձր չեն պահ ու զահ
Մըրտակով թէ զարնեմ անխորու
Զեր անձին ու սանձին անհորու զահ
Զըկարծէք աչք ունեմ
Զեր «փառքին» ու «գանձին»
Որքան էլ ձեր «Ես»-ին չի պատճեն
Ես պատժեմ չարաջար

Նըր խօսէք իմ մասին—
Միշտ եղէք անձչառ...

* *

Լուսաշող փարոս եմ ես ուզում լինել.—
Նաւորդի սրբառում շողեմ յոյս—կրակ...
Միրոյ երկինք եմ ես ուզում լինել,—
Անսէր սրբառին ցողեմ սէր ու կեանք...

Վառ—արեգակ եմ ես ուզում լինել,—
Զիւնոտ սարերի սառուցը հալեմ...
Անմահ գարուն եմ ես ուզում լինել,—
Ողջ տիեզերքը կանաչով վառեմ...

Հըրավառ գընտակ եմ ես ուզում լինել,—
Նենդ սրբառի մէջ խըրւեմ ու պաղեմ,
Բոցավառ կըրակ եմ ես ուզում լինել,
Գարշ հոգիները այրեմ ու դադեմ...

Շառաջող սոռմք եմ ես ուզում լինել,—
Մե՛ վամպերների սրբառում պայթեմ...
Թունազանդ օծ եմ ես ուզում լինել,—
Նըրանց ձագերին հէնց բընում խայթեմ...

Ծանըր զընդան եմ ես ուզում լինել,—
Յուրատ շըլթաները վըրաս զընգզընգան...
Բահ ու բըրիչ եմ ես ուզում լինել,—
Ողջ վամպիրներին փորեմ գերեզման...

Փայուսմ ես ուզում պոկել սարերից,
Այդ գերեզմանը թաղեմ նըրա տակ...
Անդունդ եմ ուզում իշլել ձորերից,—
Որ նըրան ձգեմ այդ վիճն անյատակ...

Ամպրոպ եմ ուզում լինել ես ուժգին,—
Ամպերի կուրծքը պատուեմ անխընայ...
Երկինքն եմ ուզում ինձ հետ միասին
Մեծ-Ազատութեան հիմը որոտայ...

Զեմ լայ, երբէք բախտիս վըրայ,
Բախտրա թէպէտ ինձ չը ժպտայ.
Ես անընդհատ
Ու անվհատ
Ոտք կը կոխեմ մի նոր ճամբայ,
(Թող էու ճամբէն ծայր չունենայ),
Կուռ կը քայիեմ, ես չէն չեմ տայ,
Բախտր ինքը իրեն կը դայ,

* *

Մեծ յոյսերի տակ կայծ պիտի դընել,
Ու պիտի վառել, պիտի բորբոքել,
Ու հընոցի պէս մի օր բոցկըլտայ,
Անյոյս սըրտերին և յոյս, և լոյս տայ:




* *

Թող ելեքտրական ոյժը ունենամ,
Խօսքերը թրոչեն կայծակից արագ,
Ինչպէս շանթ, փայլակ,
Շէկ ու հըրավառ
Շանթեն ուղեղըդ, ցընցւես խելավառ...

Թող ես շոգիի ուժը ունենամ,
Լըծւեմ աշխարհին այն սոսկավիթխար,
Եւ իմ յետեից ես նըրան քաշ տամ
Դէպ ազատութեան Սարը փըրկարար...

Թող իմ խօսքերը կայծակներ դառնան,
Հորիզոնները շանթերով հերկեն,...
Թող իմ մտքերը շանթակներ դառնան,
Երկունքով բընուած կամարը ձեղեն.

Եւ նըրա անհուն,
Անսուն ու անբուն
Էն մեծ արգանդից մութ, արնապարար,
Հազար դաւերով,
Հազար ցաւերով
Արել ծընեն վառազատարար:



* *

Զանգին են զարնում,
Սիրտս է զօղանջում...
Աշխարհն է հիւանդ,
Իմ սիրտն է տանջւում...
Բայց ինչու, ինչու
Մընամ անտարբեր,
Երբ ես եմ հիւանդ,
Երբ չունիմ ես ոչը...



* *

Ես չեմ սիրում մատաղ կոյսի
Արցունքները ցուրտ ու սառ,
Ես սիրում եմ խըրափոյսի
Բարձունքները յուսավառ...

Ես չեմ սիրում հեծկըլտանքը
Խաւարատենչ այրերի,
Ես սիրում եմ յաղթ բերկըլտանքը
Ազատատենչ մայերի...



* *

Մի գօրեղ թըշնամի ունենամ
Լաւ է,
Քան հազար թուլասիրտ բարեկամ.
Թըշնամիս թէ մեռնի—ինձ համար
Ցաւ է.
Լըստրմ ես, թուլասիրտ բարեկամ...



* *

Մահամերձ բըռնութեան դուք ըստրուկ
Հոգիներ,
Գիտեմ... «ապրելուց» դուք դեռ չէք յոգնել.
Դուք դեռ շատ կուզէիք դողալ ու սողալ,
Որ ձեր սկը ամօթից ճաքէին սար ու քար...

Հա, թէ ի՞նչ անենք, կեանքն է անողոք
Նա միշտ ծընում է ցասում ու բողոք,

Նա ուժ է տալիս Բարի կըռներին,
Որ ուժով զարնեն Զարի դըռներին,

Արնախում չարը, որի հարազատ
Զաւակներն էք դուք, ապրեց իր դարը.
Այժմ ծընում է բարին քաջազատ,
Որ վերածընէ հիւանդ աշխարհը:

Միայն աշխարհը... իսկ ձեզ... Զեզ երբէք
Փըրկութիւն չըկայ... Դուք պիտի մեռնէք...
Դուք պիտի սողաք դէպ ճահիճը դարշ՝
Ճիճուների հետ այն ստորաքարշ:

Այնտեղ պիտ գըտնէք դուք քուն ու
հանգիստ,

Այնտեղ պիտ գըտնէք դարման ձեր ցաւին.
Եւ անպէտքացած ձեր կեանքի նաւին՝
Մահ... բայց ոչ ժըպտող ափ-նաւահանգիստ:



ՆԻԿՐ ՕՐ. Ա. Զ.-ԻՆ

Մարդիկ կան, որոնց պէտք
է ոչ թէ ձհոք մեկնել, այլ
թաթ. իսկ ես ուզում եմ,
որ քո թաթը սուր ճանկեր
ունենայ:

Ինձ ատում են բոլոր նըլրանք,
Որոնց ես եմ արհամարհել,
Որոնց՝ ինչպէս հէզ ճըմիի՝
Չեմ էլ կոխել... Այլ անցել...

Քեզ էլ, ընկեր, թող որ ատեն
Նըլրանք, որոնց չես սիրում...
Կոխիք ու անց ճիճուներին,
Միայն... թէ չես զրգւում...

* *

Ինչու ես սև հագել,
Ընկեր իմ թանկագին,
Ինչու են դըժգունել
Աչերդ այդ անգին:

—Յոյս չկայ, լոյս չկայ
Իմ սըրտում անարե,

Լուսաշող իմ հոգին
Մըթնել է, սկը է, սկը...

Ախ, հանգաւ ու ընկաւ
Կըրակն իմ վառ սըրտի,
Ու թըրաւ, նա մեռաւ,
Տատրակն իմ ջառ սըրտի...

Յոյս չըկայ, լոյս չըկայ
Աշխարհում անարե...
Ինձ համար սըրտիս պէս
Աշխարհն էլ սկը է, սկը...



* *

Կարկտահար վարդերի ես նըման,
Իմ կեանքի գարունքին չը հասած
Գըլորւեմ ցըլտաշունչ գերեզման,
Ականջիդ սիրոյ խօսք դեռ չասած...

Դու եկար՝ մոլեգին և ուժգին
Խըփեցիր իմ սըրտիս լարերին,
Եւ սիրոյ մեծ-քընարն իմ անգին
Փըշըցիր՝ զարկելով քարերին...


Սիրահար բըլբուլի ես նըման
Հողմահար, թևաթափ ու ջարդւած.
Էհ, ընկնեմ յուսախաբ գերեզման,
Քո սըրտի ալվարդին կարօտած...



*
* *

Ախ, սե աչեր, ախ, սե աչեր,
Զեր դարդն է ինձ հալել, մաշել...
Դուք էք սըրտիս մէջ վար վարել
Ու ակօսել, սէրըս ճարել...
Դուք էք այստեղ հընոց վառել,
Զեր բոցերով սէրըս վառել...

Էրնէկ լուսնի պէս լոյս անեմ,
Զեր խորանում լոյսըս ցանեմ,
Լոյսիս շողով ես ձեզ հանեմ,
Վանեմ հեռու, տանեմ, տանեմ...
Սարի գըլիխն ձեզ բաց անեմ,
Զեր հայեացքով սէրըս դաղեմ,
Զեր խորանում նըրան թաղեմ,—
Ուրիշ սըրտի սէր չը տանեմ...



* *
Անսէր սիրտը անաղատ է,—
Ծարտաւ սըրտին ջուր չի տայ...

Սէրը՝ թէ որ անաղարտ է,—
Լոյսի հետ սե մուր չի տայ...

Սըրտումս կայ մի մեծ կըրակ,
Որ սիրով է միայն վառւում...
Սէր տուր, սէր ինձ, քնքուշ տատրակ,
Քո սիրով է միայն վառւում...

Աչերըդ սե սաթի նըման,
Սէրըդ համեղ՝ կաթի նըման,
Սէր տուր, մեծ սէր իմ կըրակին,
Որ ինձ վառէ շանթի նըման...

— ։ ։ ։ —

*
* *

Սե ունքերիդ տակ
Աստղերս են վառւում,
Թող շատ նայեմ, շատ...
Քընքուշ կըրծքիդ տակ
Սիրտս է բարախում,
Թող շատ շոյեմ, շատ...

Բոյիդ մէջ բաղիս չինարն եմ տեսնում,
Շատ երկարի, շատ...
Զայնիդ մէջ երգիս քընարն եմ տեսնում,
Շատ զարդարի, շատ...

Թըշերիդ վըրան
Վարդերս են բուսնում,
Թող հոտ առնեմ, հոտ...
Լայն դօշիդ վըրան
Նըռներս են հասնում,
Թող մօտ առնեմ, մօտ...



*
**

Զեռքըս բըռնեցիր,
Սեղմեցիր թեթև,
Եւ սարսուռ անցաւ
Իմ ամբողջ մարմնով,
Եւ սիրտըս, որ միշտ
Մըթին էր ու սև,
Վառւեց գերբնական
անշէջ կըրակով...

Եւ առմիշտ խընդաց
Եւ անվիշտ թընդաց,
Երգելով գարուն...

Բնկեր իմ համեղ,
Ընկեր պատուական,
Էն քո կուսական
Մեծ սէրն էր անշեղ,
Որ ելեքտրական
Հոսանքի նման
Վազեց իմ սըրտի
Խորշերում սառած
Եւ վառեց սիրոյս
Լապտերը մարած...

Եւ նա գողդողաց,
Եւ նա շողշողաց,
Ու լոյս փողփողաց
Իմ խաւար հոգում...



Ես խընդամ անդարդ
Գարունքի նման,
Դու սըրտս հանդարտ
Աշունքի նըման.

Եւ սոխակները գան ու գեղգեղան
իմ գարուն կեանքի վարդերի վըրան.
Եւ կըռունիները գան, անուշ կըղղան
Քո աշուն կեանքի դարդերի վըրան:

ԱՆԹԱՌԱՄ ՓՆՁԵՐ

Փունջ կը հիւսեմ ծաղիկներից,
Վարդ ու զարդից ալալւան,
Փունջը կառնեմ, զառով կապեմ,
Այն զառերով վառ-վառման:

Փունջ կը հիւսեմ իմ մըտքերից՝
Անուշաբոյր, քաղցրահամ,
Որ թէ զարնւէ մըրրիկներից,
Միշտ էլ մնայ անթառամ...

Եկ փունջ հիւսենք ծաղիկներից,
Վարդ ու զարդից ալ-ալւան,
Փունջը առնենք, զառով կապենք,
Այն զառերով վառ-վառման...

Եկ փունջ հիւսենք մեր մըտքերից՝
Անուշաբոյր, քաղցրահամ,
Որ թէ զարնւէ մըրրիկներից,
Միշտ էլ մընայ անթառամ...

Թէև քաղցր է համով մեղրը,
Բայց շատ ուտես, սիրտ կը խառնի...

Սէրը որքան քաղցըր լինի,
Երբէք մարդու սիրտ չի խառնի...

Դու աշխատիր մեղրին երբէք
Չընմանուել. — սիրտ կը խառնես...

Եղիր մի սէր՝ սէզ, աննման,
Որ մի հատ սիրտ միայն առնես...



Ես սիրում եմ միայն նըրան,
Ով սիրում է ինձ ու իրան...

Ես ատում եմ միայն նըրան,
Ով ամում է միայն իրան...

Այս այլուր այս միայն իրան

* *

Այս ինչ բարձր է,
Ես այն եմ սիրում.

Երկինքը բարձր է,
Երկինքն եմ սիրում:

Ինչ որ հրպարտ է,
Ես այն եմ սիրում.

«Ես»ը հապարտ է.—
Ես «Ես»ն եմ սիրում:

→⊗←

* *

Իմ չարեկամն է,
(Ով ինձ ասում է) —

— «Ապրիլ մեզ համար,
Գործիր մեզ համար»...

Իմ բարեկամն է,
(Ով ինձ ասում է) —

— «Ապրիլ քեզ համար,
Գործիր քեզ համար»...

Իմ չարեկամն է,
(Ով ինձ ասում է) —

— «Ապրիլ քո «Ես»ը,
Սիրիլ ուրիշն»...

Իմ բարեկամն է,
(Ով ինձ ասում է) —

— «Եռաջ քեզ սիրեր,
Յետոյ ուրիշն»...

||—————||

* *

Օձի պէս իմաստուն եղիք,
Բայց մի սողա նըրա նըման.

Աստղի պէս ճամբէդ մին շնղիք,
Մի էլ դողա նըրա նըման:

Էս արծւի պէս սէգ ու հրպարտ
Արհամարհիր արօտ ու արտ,

Գետնից թոիր մինչ մեծ սարեր,
Թըսիր վերև, միշտ դէպի վեր...

————→————


ՄՕՐ ԱՒԱՆԴԼ

Գընա, բալաս սարը ճըղիր
Ու մէջքովը քար քաշիր.
Քաղցած մընա, ձեռք մի մեկնիր,
Քո սիրտը կեր ու մաշիր:

Գընա, բալաս, մըտքեր ճըղիր,
Մըտքի քարեր դու սաշիր,
Անգործներին դէպ դործ մըղիր,
Մըտքի արօր դու քաշիր:

Աշխարհն ասես մի սև դըժոփք,
Ու մարդիկ չար սատանայ,
Դաւ են նիւթում սե, անողոք,
Որ չարիքը շատանայ:

Կըրակ գըցիր դու նըրանց մէջ,
Այլուի, փըլի այդ չարիք.
Բոցալեզու հուրըդ անշէջ
Թող որ ծընէ նոր-բարիք:



* *

Զեմ ապրի ես իզուր
Վառ Գարունն իմ կեանքի,
Զեն խամրի առանց ջուր
Վարդերն իմ տանջանքի.

Զեմ վըշբի յոյսերը
Ծաղկավառ իմ կեանքի.
Զեմ աայ իմ բոյսերը
Տար-օտար խընամքի.

Զի ցամքի ոըրտիս մէջ
Գետը իմ սիրահոս,
Կը մաշւի իմ սիրտը,
Կը մեռնի... Ա՛խ, ափսոս...



* *

Ինձ համար կամքը
Հազար կեանք արժէ.
Կամագուրկ կեանքը
Հէչ... գըրոշ չարժէ.

Ես կեաքս կը տամ,
(Եթէ այն խնդրէք).

Բայց կամքս... երբեք.
(Թէկուզ ինձ մորթէք):

ՍԱՏԱՆԱՅԻՆ

Դու զուր ես, զուր ես
Աչքերըդ չըռած,
Գարշ ձեռքերիդ մէջ
Քար, երկաթ բըռնած
Զարկում իմ դըռան,
Որ նըրան փըրես...


Իմ գուռը, ճիշտ է,
Ապակի ունի,
Բայց խիստ ամուր է,
Այն դու չես կոտրի...

Դու զուր ես, զուր ես
Բըռուրին կանգնած,
Հրսկայ բերանըդ
Թոյնով ուռցրած,
Թըքում ծովիս մէջ
Նըրան պըղտորես...

Իմ ծովը— ճիշտ է—
Կապոյտ ջուր չունի,
Բայց փըրփուր ունի...
Եւ այդ փըրփուրը

Մի օր կատաղած՝
Կառնէ շաղախած
Եւ քո շըպըրտած
Աև կեղան ու մուրը
Ու յործանք կը տայ
Դէպի բըլուրը.

Եւ քո թըքածը
Կըբերէ զարնէ
Ո՞չ թէ քարափինո
Այլ քո պինդ ճակտինո.



* *

Ես իմ զործը ոչնչի
վըրայ եմ դրեւ—
Մաքս-Շահրեներ



Տիեզերքի մէջ, արևի նըման
Ուզում եմ ապրել մենակ ու անձայն,
Առանց պատւանդան առանց յենարան։

Անկըշիո, անյայտ Ոչընչի վըրան
Ուզում եմ ես իմ առանցքն ունենամ,
Առանցքիս շուրջը պըտըռւեմ միայն։

Է՞ն.... Աշխարհն էլ թող իմ գծած ճամբով
Միշտ առաջ վագէօ, Սև, ծանըր ամպով
Թող սիրտը ճընշւէ, բայց չնղբայ հոգին։

Ես այդ ամպերից շանթեր կը ծնեմ՝
Շանթերով լոյս տամ անլոյս աշխարհին։



* *

— Դու անհատ ես, ինդի-
վիդ և դրա համար պիտի
լինես ինքնուրոյն և հզօր։
Մաքս-Շահրեներ։

Դու թոյլ տուր, ցանկա, որ ամեն մէկը
Ինքը ունենայ ձեռքում իր դեկը։

Բայց և պահանջիր, որ ոչ մի անհատ
Զըխանգարէ քեզ ապրելու ազատ։

Դու ինքը եղիր քո սըրտի սէրը.
Ու ինքը եղիր քո գրիմի տէրը։

Երբէք մի քաշւիր սիրել քեզ անվախ,
Զըրգտիր տիրել քեզ և ապրել անկախ։

Փափազիր ապրել ամբոխից հեռու,
Ատիր խուժանը՝ այն բիրա, ահարկու։

Մի լինիր ըստըռուկ, կամ մարդ կամ իշխան,
Սյլ եղիր գերմարդ հրզօր, ինքնիշխան։

Քո դատարանը թող սիրտը լինի,
Եւ դատաւորը քո իմիդը միայն։



*
* *

Ինքնասսէր թըշնամի ունենամ
Հաւ է,

Քան հազար ինքնատեաց բարեկամ,
Թըշնամիս թէ մեռնի ինձ համար
Ճաւ է.

Լըստւմ ես, ինքնատեաց «բարեկամ»։



*
* *

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՕԹԵՒՆ

Ինչու եմ, լնչու վերջին ժամանակ
Ինդիվիդուալիզմը սիրում ես մենակ.

Ամեն ոք ապրում է ըստ իր ճաշակի —
Դա մի պահանջ է բանական կեանքի։

Ես թոյլ եմ տալիս, որ ամեն մէկը
Ինքը ունենայ ձեռքում իր ղեկը։

Բայց և ուզում եմ, որ ոքոչ մի անհայտ
Չըխանգարէ ինձ ամփերու աղասի։



«Ազգային գրադարան



NL0352010

39705

